ԵՊՀ ՕԼԻՄՊԻԱԴԱ - 2026

«Հայոց եկեղեցու պատմություն» առարկայի օլիմպիադայի հարցաշար

1. **Զաքարիա Զագեցուց հետո կաթողիկոս է ընտրվում.**

1. Հովհաննես Դրասխանակերտցին 2. Ներսես Տայեցին 3. Գևորգ Բ Գառնեցին

4. Պետրոս Գետադարձը

2. **Հայոց ո՞ր կաթողիկոսն է 948 թ. կաթողիկոսական աթոռը տեղափոխում Կարս, ապա Արգինա.**

1. Մաշտոց Ա Եղիվարդեցի 2. Անանիա Մոկացի 3. Ստեփանոս Սևանցի

4. Վահան Սյունեցի

3. **Ո՞վ է հիմնել Բջնիի եպիսկոպոսական աթոռը.**

1. Պետրոս կաթողիկոսը 2. Վահան Սյունեցին 3. Ստեփանոս Սյունեցին

4. Խաչիկ Արշարունին

4. **Քա՞նի տարի է տևել Պահլավունի տոհմի գահակալության շրջանը.**

1. 120 2. 130 3. 135 4. 140

5. **Ո՞ր թվականին է Հայրապետական աթոռը տեղափոխվել Հռոմկլա.**

1.1114 թ. 2. 1149 թ. 3.1151 թ. 4.1293 թ.

6. **Քա՞նի կանոն է ընդունվել Սսում կայացած 1243 թ. եկեղեցական ժողովի ժամանակ.**

1. 18 2. 20 3. 22 4. 24

7. **Ո՞ր թվականին է մահանում կաթողիկոս Հովհաննես Կարբեցին.**

1. 1844թ. 2. 1842թ. 3. 1843թ. 4. 1844թ.

8. **Ո՞ր թվականին է Նիկոլայ Առաջինը հաստատում հայ եկեղեցու կանոնադրությունը.**

1. 1836թ. 2. 1837թ. 3. 1838թ. 4. 1839թ.

9. **Քա՞նի գլխից և քա՞նի հոդվածից էր բաղկացած եկեղեցական կանոնադրությունը.**

1. 8 գլուխ, 141 հոդված 2. 11 գլուխ, 141 հոդված 3. 10 գլուխ, 151 հոդված

4. 10 գլուխ, 141 հոդված

10. Ե՞րբ է ցարի հրամանագրով հայ եկեղեցու գույքը վերադարձվել.

1. 1903թ. օգոստոսի 4-ին 2. 1905 թ. օգոստոսի 1-ին 3. 1905 թ. սեպտեմբերի 1-ին

4. 1903թ. օգոստոսի 3-ին

11. Պատմիչ Ստեփանոս Օրբելյանի վկայությամբ Գրիգոր Լուսավորիչը Հայքում քա՞նի եպիսկոպոսական աթոռն է հաստատում.

1. 28 2. 32 3. 34 4. 36

12. Ո՞ր թվականին է մահացել Սուրբ Վրթանես կաթողիկոսը.

1. 333 թ. 2. 341 թ. 3. 347 թ. 4. 349 թ.

13. Ո՞ր քաղաքում Մեսրոպ Մաշտոցը ստեղծեց հայոց գրերը.

1. Ամիդ 2. Սամոսատ 3. Եդեսիա 4. Անտիոք

14. Ո՞ր թվականին Աշտիշատում գումարվեց հայոց առաջին եկեղեցական ժողովը.

1. 344 թ. 2. 351 թ. 3. 353 թ. 4. 354 թ.

15. Ո՞ր թվականին է Պարսից արքան Սահակ կաթողիկոսին ազատում աքսորից և թույլ տալիս վերադառնալ Հայաստան.

1. 422 թ. 2. 432 թ. 3. 439 թ. 4. 440 թ.

16. Ինչպե՞ս Պիղատոսն արտահայտեց իր անհամաձայնությունը Հիսուսին մահվան դատապարտելու որոշման վերաբերյալ.

1. ծնկի իջավ, աղոթեց 2. վիճեց քահանայապետերի հետ 3. ջուր վերցրեց սկսեց լվալ ձեռքերը 4. շփոթված դուրս եկավ դահլիճից

17. Ո՞ր կաթողիկոսի մահից հետո հայոց կաթողիկոսները ձեռնադրման համար այլևս Կեսարիա չմեկնեցին.

1. Ներսես Մեծի 2. Շահակի/Հուսիկի/ 3. Սահակ Պարթևի 4. Հովսեփ Ա Հողոցմեցուց

18. Զեյթունի 1895թ.-ի ինքնապաշտպանության ժամանակ հոգևոր ո՞ր գործչի թրի տակով են անցել գերի ընկած թուրք զինվորները.

1. Վարդան վարդապետի 2. Բագրատ վարդապետ Թավաքալյանի

3.Ներսես եպիսկոպոս Խարախանյանի 4. Բարդուղիմեոս վարդապետի

19. Հայոց կաթողիկոսներից ո՞վ էր ձեռնադրել վրաց Կյուրիոն կաթողիկոսին.

1. Մովսես Բ Եղիվարդեցի 2. Աբրահամ Ա Աղբաթանեցի 3. Ներսես Բ Բագրևանդցի 4. Կոմիտաս Ա Աղցեցի

20. Միջնադարյան ո՞ր հեղինակն է «Հայսմավուրք»-ի վերջին խմբագրողը.

1) Ներսես Լամբրոնացի 2) Գրիգոր Բ Վկայասեր 3)Գրիգոր Տաթևացի 4) Գրիգոր Խլաթեցի

21. Հեղինակների անունները համապատասխանեցնել աշխատությունների վերնագրերին.

1.Վարդան Այգեկցի ա) «Հաճախապատում»

2. Ստեփանոս Օրբելյան բ) «Մատյան ողբերգության»

3. Մկրտիչ Խրիմյան գ) «Կնիքհաւատոյ»

4. Գրիգոր Լուսավորիչ դ) «Գիրք հաստատութեան և արմատ հաւատոյ»

5. ՀովհաննեսՕձնեցի ե) «Ընդդեմ պավլիկյանների»

6. Գրիգոր Նարեկացի զ) «Դրախտի ընտանիք»

է) «Սուրբ Կաթողիկեի ողբը»

1.	
2.	
3.	
4.	
5.	
6.	

22. Հայոց կաթողիկոսների անունները համապատասխանեցնել իրադարձություններին.

1. Սարգիս Ա Սևանցի 2. Սիմեոն Ա Երևանցի 3. Մաշտոց Ա Եղիվարդեցի

4. Կիրակոս Ա Վիրապեցի 5. ՍտեփանոսԵ Սալմաստեցի 6. Գևորգ Բ Գառնեցի

1	
2	
3	
4	
5	
6	

ա) Ս. Առաքելոց և Ս. ԱստվածածինեկեղեցիներիկառուցումըՍևանակղզում

բ) «Տերանց հայոց» գաղտնի խորհրդաժողովի գումարումը Էջմիածնում

գ) Կաթողիկոսական աթոռի տեղափոխումը Սսից Էջմիածին

դ) Երևանի Ս. Զորավոր եկեղեցու կառուցումը

ե) Կաթողիկոսական աթոռի տեղափոխումը Զվարթնոց

զ) Տպարանի հիմնադրումը Էջմիածնում

է) Գագիկ I Բագրատունու և Դավիթ Անհողինի ռազմական բախման կանխումը

23. Նշվածներից ո՞ր երկուսն են սխալ.

1) Անդաստանը աշխարհի չորս ծագերի օրհնության արարողություն է:

2) Խնկարկությունը խորհրդանշում է առ Աստված բարձրացող աղոթքն ու օրհնությունը:

3) Տնօրհնեքի ժամանակ քահանան օրհնում է հացը, ջուրը, աղը և տան հիմքերը:

4) Հոգեհանգստյան արարողության վերջում՝ «Քրիստոս, որդի Աստուծոյ» աղոթքի ընթացքում, հիշատակվում են ննջեցյալների անունները:

5) Անդաստանը կատարվում է, երբ պատարագի ընթացքում ասվում է «Աստուծոյ երկրպագեսցուք»:

6) Մատաղն արգելված է պահոց օրերին:

24. Նշվածներից ո՞ր երկուսն են սխալ.

1) Տավուշի թեմի առաջնորդանիստը Դիլիջանի ս. Ներսես Շնորհալի եկեղեցին է:

2) Պատմիչ Ստեփանոս Օրբելյանի վկայությամբ՝ ս. Գրիգոր Լուսավորիչը Մեծ Հայքում հաստատում է 36 եպիսկոպոսական աթոռներ:

3) 1441 թ. իրադարձությունների ժամանակ Աղթամարում գահակալում էր Զաքարիա Գ. կաթողիկոսը, որ գործնականում որևէ աջակցություն չցուցաբերեց կաթողիկոսական աթոռը Սսից Էջմիածին տեղափոխելու գործում:

4) 1844 թ. Կոստանդնուպոլսի նորընտիր Մատթեոս պատրիարք Չուխաճյանը հրահանգում է արևմտահայ բոլոր եկեղեցիներում հիշատակել Ամենայն Հայոց հայրապետի անունը, իսկ Ներսես Աշտարակեցին հայրապետական կոնդակով օրհնում է պատրիարքին և հայտնում իր գոհունակությունը:

5) 1918 թ. Խորեն եպիսկոպոս Մուրադբեկյանի ներկայացմամբ Ամենայն Հայոց կաթողիկոսը հաստատեց մի շարք կետերից բաղկացած մի «հրահանգ», որով առաջնորդվեցին հայ զինվորական քահանաները Հայաստանի Առաջին հանրապետության բանակի գոյության ողջ ընթացքում:

25. Նշվածներից ո՞ր երկուսն են ճիշտ.

1) Տերունական տոներից հինգը կոչվում են տաղավար տոներ՝ Սուրբ Ծնունդ, Սուրբ Հարություն (Ս.Զատիկ), Տյառնընդառաջ, Պայծառակերպություն և Սուրբ Աստվածածնի վերափոխում։

2) Զղջումից, խոստովանությունից և քավությունից հետո եկեղեցում Հաղորդության խորհրդի միջոցով մարդը թողության է արժանանում, այսինքն՝ ներվում են նրա մեղքերը։

3) 1461 թ. Աբրահամ եպիսկոպոսը ճանաչվեց Օսմանյան կայսրության տարածքում բնակվող հայերի հոգևոր առաջնորդ և նշանակվեց Կ. Պոլսի առաջին հայ պատրիարք։

4) Գևորգ Զ. Չորեքչյանի ջանքերի շնորհիվ վերաբացվում է Էջմիածնի հոգևոր ճեմարանը, տպարանը, վանքի գրադարանը, կարգավորվում է «Էջմիածին» հանդեսի հրատարակությունը։

5) 1970 թ. մայիսին Վազգեն Ա-ն այցելում է Վատիկան և հանդիպում Հռոմի ՀովհաննեսՊողոս Բ պապին։

26. Դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.

1	
2	
3	
4	
5	
6	
7	

ա) Հալեպում հայ կաթողիկե եկեղեցու պաշտոնապես հռչակումը որպես կառույց և եկեղեցական առանձին նվիրապետություն

բ) Տպարանի և թղթի գործարանի հիմնադրումը Էջմիածնում

գ) Հայկական եկեղեցական հողերի և գույքի բռնագրավման օրենքի հաստատումը Նիկոլայ II ցարի կողմից

դ) Ղարաբաղի մետրոպոլիտության ստեղծումը

ե) Գևորգյան ճեմարանի հիմնումը

զ) Սյունյաց մետրոպոլիտության լուծարումը

է) Ֆոնուզի Ս.Կարապետ վանքի փոխվանահայր Բարդուղիմեոս վարդապետի սրի տակով թուրքական կայազորի գերի ընկած շուրջ 700 զինվորների խոնարհված անցնելը

27. Դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.

ա) Հավատացյալների կրոնական կյանքի ճիշտ կազմակերպման և կրոնական կենցաղին վերաբերող 24 կանոնների ընդունումը Սսի ժողովում

բ) Աղթամարի հակաթոռ կաթողիկոսության ստեղծումը

գ) Պավլիկյանների դեմ հատուկ կանոնի ընդունումը Դվինի եկեղեցական ժողովում

դ) Կաթողիկոսական աթոռի տեղափոխումը Աղթամար

ե) «Կառավարիչ Ս. ժողովի» կամ Սինոդի հրավիրումը

զ) Ս. Հռիփսիմյանց կույսերին նվիրված եկեղեցու կառուցումը Անիում

է) Հայկական թեմերի հիմնումն Անտիոքում և Կիլիկիայում

ը) Պահլավունիների տոհմի կաթողիկոսական իշխանության ավարտը

թ) Մայր Աթոռ Ս. Էջմիածնի պաշտոնական պարբերական «Արարատ» հանդեսի հիմնադրումը

1	
2	
3	
4	
5	
6	
7	
8	
9	

28. Հոգևոր կենտրոնի անունը համապատասխանեցնել գավառի անվանը.

1) Արշարունիք 2) Շիրակ 3) Կարին 4) Խաչեն 5) Վայոց ձոր 6) Արտազ 7) Ռշտունիք

ա) Գանձասարի վանք
բ) Նարեկավանք
գ) Գետիկի վանք
դ) Դպրեվանք
ե) Հնձուց վանք
զ) Ցախաց քարի վանք
է) Ս. Թադեի վանք
ը) Կամրջաձորի վանք

1	
2	
3	
4	
5	
6	
7	

Կարդացե՛ք մեջբերված հատվածը և պատասխանե՛ք 29-31-րդ հարցերին.

«…Պատմում են, որ մինչև կյանքի վերջին րոպեն ձախ ծոցի գրպանում մի թուղթ էր պահում, որից չէր բաժանվում գիշեր-ցերեկ. թե ինչ բովանդակություն ուներ այդ թուղթը, ոչ ոք չգիտեր, որովհետև նա ոչ ոքի ցույց չէր տալիս: Բայց երբ «…» վերադարձավ և մտերիմների հետ խոսք ու զրույց էր լինում Պասկևիչի ու անցած

գնացած անցքերի մասին, ծերունի հայրապետը ձեռքը դնում էր ձախ ծոցի վրա և խորին հառաչանքով ասում. «Պասկևիչը ահա այստեղ է կաշկանդված»:

29. Ո՞վ է մեջբերված հատվածի հեղինակը.

1) Ստեփան Կերտող 2) Կյուրեղ Քիպարյան 3) Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյան 4) Նորայր Սարուխանյան

30. Ո՞ր կաթողիկոսի մասին է մեջբերված հատվածը.

1) Հովհաննես Ը. Կարբեցի 2) Ներսես Ե. Աշտարակեցի 3) Մատթեոս Ա. Կոստանդնուպոլսեցի 4) Մկրտիչ Ա. Խրիմյան

31. Որտեղի՞ց էր վերադարձել կաթողիկոսը.

1) Թիֆլիսից 2) Կ.Պոլսից 3) Բեսարաբիայից 4) Բեռլինից

Կարդացե՛ք մեջբերված հատվածը և պատասխանե՛ք 32-34-րդ հարցերին.

«Նա շատ մեծ անուն էր հանել, անարատ և արդար մարդ էր, շատ առաքինի, հռետորական գիտության քաջագիտակ, Աստծո Հին ու Նոր Կտակարաններին քաջատեղյակ և ամեն տեսակետից կարող էր օգտակար լինել Քրիստոսի հոտին։ … Նա հայոց ժողովրդի մեջ պայծառացրեց վանական դասը, նա էր, որ վերականգնեց Սուրբ Գրիգոր Լուսավորչի աթոռը Հայաստանում և փայլեց սրբությամբ և ամենայն պարկեշտությամբ։ Նա պահեցող էր և աղոթող»։

32. Ո՞վ է մեջբերված հատվածի հեղինակը.

1) Թովմա Մեծոփեցի 2) Ստեփանոս Օրբելյան 3) Կիրակոս Գանձակեցի 4) Մատթեոս Ուռհայեցի

33. Ո՞ր կաթողիկոսի մասին է մեջբերված հատվածը.

1) Գրիգոր Գ Պահլավունի 2) Գրիգոր Բ Վկայասեր 3) Գրիգոր Դ Տղա 4) Ներսես Դ Շնորհալի

34. Ո՞ր թվականին է նա ընտրվել կաթողիկոս.

1) 1113 թ. 2) 1066 թ. 3) 1166 թ. 4) 1173 թ.

Կարդացե՛ք մեջբերված հատվածը և պատասխանե՛ք 35-37-րդ հարցերին.

«Այն ժամանակ, երբ լրացավ մեր Տիրոջ մարմնանալու հազար տարին, Հայոց .... թագավորը բարի խորհուրդ հանձն առավ՝ կամեցավ Քաղաքադաշտի սուրբ ....

անունով կառուցված, բայց քանդված մեծաշեն եկեղեցին նույն ձևով ու չափով կերտել .... քաղաքում: Այն հիմնեց Ծաղկոցաձորի կողմում, բարձրավանդակ տեղում՝ տեսնողներին հիացնող մեծ սրբատաշ քարերով և նուրբ զարդաքանդակներով, լուսաբեր պատուհաններով, եռյակ դռներով, սքանչելատես գմբեթով, որ նման էր երկնքի գնդին»:

35. Ո՞ր եկեղեցու մասին է խոսքը.

1) Տիգրան Հոնենցի 2) Ս. Կաթողիկե 3) Ս. Գրիգոր Լուսավորիչ 4) Ս. Առաքելոց

36. Ո՞ր աշխատությունից է մեջբերումը.

1) «Տիեզերական պատմություն» 2) «Հայոց պատմություն» 3) «Ազգապատում» 4) «Ժամանակագրություն»

37. Ո՞վ է աշխատության հեղինակը.

1) Հովհաննես Դրասխանակերտցի 2) Ստեփանոս Տարոնեցի Ասողիկ 3) Մատթեոս Ուռհայեցի 4) Մաղաքիա Օրմանյան

Կարդացե՛ք մեջբերված հատվածը և պատասխանե՛ք 38-րդ և 39-րդ հարցերին. «… Ժողովուրդ ամենեն առաջ քո ազատության հույսը քո վրա դիր, քո խելքին, բազկին ուժ տուր, մարդ ինքն իրմե պետք է աշխատի, որ փրկվի»:

38. Հայոց ո՞ր կաթողիկոսն է մեջբերված խոսքերի հեղինակը.

1) Հովսեփ Ա. Հողոցմեցի 2) Մկրտիչ Ա. Խրիմյան 3) Գևորգ Ե. Սուրենյանց 4) Վազգեն Ա. Պալճյան

39. Նշվածներից ո՞ր կարևոր իրադարձությունն է տեղի ունեցել նրա գահակալության տարիներին.

1) Ավարայրի ճակատամարտը 2) Շուշիի ազատագրումը 3) Խանասորի արշավանքը 4) Սարդարապատի ճակատամարտը

40. Որտեղի՞ց է մեջբերված հատվածը.

« ...Հաւատամք եւ ի մի միայն յԸնդհանրական եւ յԱռաքելական Սուրբ Եկեղեցի, ի մի մկրտութիւն, յապաշխարութիւն, ի քաւութիւն եւ ի թողութիւն մեղաց, ի յարութիւնն

մեռելոց, ի դատաստանն յաւիտենից հոգւոց եւ մարմնոց, յարքայութիւնն երկնից և ի կեանսն յաւիտենականս»:

1) Եփրեմ Ասորու «Հոգևոր խրատներ»

2) Գրիգոր Նարեկացու «Մատյան ողբերգության» աղոթագիրք

3) Ղազար Ա. Ջահկեցու «Գիրք աղօթից, որ կոչի Աստուածաղերս»

4) Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու Հավատո Հանգանակ

ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

1- 3
2- 2
3- 1
4- 2
5- 3
6- 4
7- 2
8- 1
9- 4
10-2
11-4
12-2
13-3
14-4
15-2
16-3
17-1
18-4
19-1
20-4
21-1-դ 2-է 3-զ 4-ա 5-ե 6-բ
22-1-է 2-զ 3-ա 4-գ 5-բ 6-ե
23-3,5
24-1,4
25-2,4
26-ա բ զ դ ե է գ

27-գ դ է զ բ ը ա ե թ
28-ը դ ե ա զ է բ
29-4
30-2
31-3
32-4
33-2
34-2
35-3
36-1
37-2
38-2
39-3
40-4